

ԲԱԺՆԵԳԻՆ

Ի Պուլկարիա
Տարեկ. 10 ֆր.
Վեցամս. 5 "
Արտասահման
Տարեկ. 12 ֆր.
Վեցամս. 6 "
Ամերիկա
2 Տոլ. 30 սենտ
ԿԱՆԽԻԿ



ՊԱՅՄԱՆՔ

Գրութիւնք եւ
են տրուիր:

Հասցէ

DIREN
PAPAZIAN
YILDIZ TABIA
VARNA
BULGARIE

ՇԱԲԱԹԱՀԱՆԴԵՍ . ԱԶԳՍՅԻՆ ԵՒ ԶԱԽԵՇՏԱԿԱՆ

Отговорникъ ГЕОРГИ ЯНТОВСКИЙ, Адвокатъ.

Ե. ՏԱՐԻ

ՆՈՅ. 19 ԵՐԿՈՒՇԱՐ 1901

ԹԻԻ 231

ԱԶԳԱՅԻՆ



ՀԱՆԳԻՍ

ԳԵՐ. 3. ՂԵՒՈՆԴ ԱԼԻԺԱՆԻ

Վենետիկի Միաբանութեան կողմէ մեզ դըրկուած մահազդէ մը խորին ցարով տեղեկացանք թէ Միսիքարեան Հարց երիցագոյնը եւ ընդհանուր Հայ ազգի համակրելիին Հայր Ղեւոնդ Աղիշան՝ կարճատեւ հիւանդութենէ մը պէտքը Նոյ. 9 առաւօտեան ժամը 6ին վախճանած է ի հասակի 81 տեւաց:

Հ Ղեւոնդ Աղիշան 25 տարեկան Օ. Ղազարու Վանքին մէջ եռանդեամբ ու գործունէութեամբ խել մը կարեւոր պաշտօններ վարելէ վերջը, գր-

ւեթէ 40 տարեկանէ ի վեր իւր կեանքը նուիրած էր գրական եւ գրութեան գործերու: Պատումկալ անդամ էր Վենետիկի գիտութեանց, գեղարուեստից եւ գրագիտական արհայական կաճառին. նոյնպէս պատմական անդամ Իտալական Ասիական ընկերութեանց. պատմական անդամ Ս. Փետրուարիի եւ Մոսկուայի կայսերական հնամանական ընկերութեանց. Բարիկի գիտութեանց ակադեմիին Օ. Էիսիէ. Եւնիպի համալսարանի փիլիսոփայութեան ձիւղին պատմական տոմար. հրամանատար Խր. Տիգրանի Օսմանիէի կարգին, նոյնպէս Մեծիսիյէի ասպետական կարգին, եւն. եւն.

Ողբացեալն Հ. Աղիշան իւր պարսպոյ ժամերը կը նուիրէր Հայկական ուսումնասիրութեանց. իւր պատմական եւ հնամանական գործերը (ի մեջ այլոց Սիսուան, Արարատ, Յուդիկի հայրենեաց եւն.) իբր անկորն չելի յիշատակարաններ պիտի մնան թէ արդի եւ թէ ապագայ Հայ գրականութեան համար. իբր ազգային բանաստեղծ իւր համբաւը եւ ժողովրդականութիւնը կէս դարէ ի վեր կը տիրէ ամբողջ Հայ ազգին մէջ որով իւր անունը պատկանելի հանդիսացած է ամբողջ Հայութեան.

Իւր այս դառն եւ անդամաւնելի կորստեանը առթիւ մեր խորին ցաւակցութիւնը կը յայտնենք Միսիքարեան Պատմաբան Միաբանութեան:

Կարգաւ «ԳԵՂՈՒՆԻ»-ի աշտը վերջին երեւոյթին մէջ:

ՆՈՒՆԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Ռուսճուքի առաջնակարգ ազգայիններէն Տիար Սարգիս Կույումճեան որ արդէն ծանօթ է իւր բարեգործութիւններովը, այս անգամ ալ տեղւոյն ազգային երկսեռ վարժարանաց տարեկան վառելափայտն ու ամուխը նուիրած է, որուն համար վարժարանաց Հոգաբարձութիւնը հրապարակաւ իւր շնորհակալութիւնը կը յայտնէ ազնիւ նուիրատուին:

— Ի նպաստ Կարնոյ երկրաշարժէն փասուածներուն մինչև հիմա 1300 ոսկիի չափ գումար մը հաւաքուեր է:

— Կարնոյ երկրաշարժէն արկածեալ ազգայիններուն ի նպաստ այս անգամ ալ Մանչէսթըրի ծանօթ վաճառականներէն Մկրտիչ Էֆ. Թոքաթլեան նախաձեռնութիւնը ունեցեր է տեղւոյն հայ և օտարազգի վաճառականներէն հանդերձեղէն հաւաքել, որ պիտի ղրկուի Պատրիարքարան, անկից Կարին՝ Տ. Զաւէն Մ. Վ. ին հաղցներու համար:

— Գրիգոր Զանչեանցի տապանաքարը կանգնելու ձեռնարկուեր է Կովկասի մէջ. Տապանաքարին յատկագիծը պատրաստուեր է արդէն՝ Հոռոմի արձանագործութեան ուսանողներէն Պ. Մ. Միքայէլեանցի կողմէ, որ յառաջիկայ տարի հետըն առնելով տապանաքարին կաղապարը, պիտի տանի Կովկաս:

— Պ. Կ. Եղեանց անդամ կարգուեր է այն յանձնաժողովին որ պաշտօն ունի Ռուսիոյ համալսարաններուն մէջ բարութեամբ մտցնելու խնդիրը քննելու:

ԲԱՅ ՆԱՄԱԿ

Հուգուգի խմբագրութեամբ

Թրքատառ «Հուգուգ»ը հրատարակելնուդ առթիւ երբ Օտեսա տարագրուեցաք, Ձեր հայրէն թերթն ալ հետերնիդ չի տարազրուեցաւ կամ չի խափանուեցաւ, ընդհակառակը, ձեր ընկերը Տիար Յ. Պօնճուգեան շարունակեց զայն, այն միջոցին գաղթականաց ստուար բազմութիւն մը կար Վառնայի մէջ և թերթերնիդ

ալ բաւական կը ծախուէր, որովհետեւ ուրիշ հայերէն թերթ չի կար, հետեւաբար, դուք դրամական անձկութեան մէջ ըստ օրինի պարտաւոր էիք ձեր ընկերովը դիմելով դրամ պահանջելու, որ եթէ ինքն ալ չունենար՝ պարտաւոր էր և կրնար ճանչորներէ 50 ֆր. Ի փոխառութիւն մը ընելով ձեզ ղրկել, այո 50 ֆրանքը չի ճարուելիք դուրս մը չէր, դուք այո բանը չըրիք, այլ ինքզինքնիդ ժէօն թուրքերու դատին մէկ զոհը ներկայացնելով անոնցմէ դրամական օգնութիւն խնդրեցիք և 50 ֆր. առիք, որ բացարձակ շահամուրթիւն ըսել է, և որով ազգային արժանապատուութեան դէմ ալ մեղանշած եղաք:

Վառնա 1901

Կէնթօ

Նոյ. 17

Մ. 2.

ԱՐՏԱՍՈՒԱԹՈՐ

Սրտաշարժ բանաստեղծութեանց յանգաւոր սոյն փոքրիկ փնչիկը որ 32 էջերէ կը բաղկանայ, արժանի է բանասիրաց ընթերցման:

Գին 20 սանդիմ: Հատ առնողներու համար գոհացուցիչ զեղչ:

Կեդրոնատեղին է մեր խմբագրատունը:

Կ Ի Ն Ը



Պինը այն առանցքն է որուն վրայ կը դառնայ մարդկութեան ճակատագիրը. այն թագուն զորութիւնն է որ ամէն տեղ կը մտնէ լուրի և իր ուզած ձևով կը չափէ, կը տնօրինէ, կը կազմակերպէ:

Կեանքի ամենէն աննշան դէպքերուն մէջ, ինչպէս նաեւ պատմութեան ամենէն փառաւոր ու պանծալի էջերուն մէջ, հոն է կինը միշտ արթուն ու ազդեցիկ:

Երբեմն Պէտթիս մ'է որ վիրաւոր Տանգէն կ'առաջնորդէ երկնից ու դժոխոց դռներէն ներս, ներշնչութիւն մը ըլլալով այն հանձարին՝ որ գուցէ մարէր վհատ՝ դեռ իր ակնախափ ճառագայթը չցոլացուցած մարդկութեան վրայ:

Երբեմն Գորնիլիա մ'է որ գուրգուրանօք կը հակի օրօրոցի մը վրայ և անճառելի բերկրութեամբ՝ կը փայտայ իր անգին գոհարը:

Երբեմն ալ, աւաղ, նոյն ինքն Բէեզեբուզն է որ

դժոխքի մահահամարոյր բոյնով կը մահացնէ, կը կործանէ ամենէն վեհ հոգիները :

Աս կամ ան, կինը ամեկին ընկերն է ամէն տարիքի և ամէն դասակարգի մարդոց, ներշնչելու և սիրելու :

Ի՞նչ վճռական վայրկեաններու մէջ կինը՝ իր մէկ նայուածքով անյաղժելի կամքերուն յաղթահարած է, իր ոտքերուն կոռուան ըրած է զանոնք : Բայց, այդ վեհանձըն էակը շատ անգամ պարտեալին ձեռք կը կարկառէ և կը կանգնէ զայն վերստին՝ կերպարանափոխուած :

Կնոջ սիրտն է որ կը վարէ արանց միտքը, անոր տկարութիւնն է որ կը զօրացնէ ու կը ոգևորէ իզայն, անոր խանդակաթ ու համակ անձնուէր սէրն է որ յատկեալութիւն և ոյժ կուտայ անոր :

Այո՛, կնոջ մէջ անձնուէր սիրոյ այն երկնատուր շնորհքն է որ անգին է. ի՞նչ կ'արժեն անոր քով մտային բարձր կարողութիւնները, անոնք հունաւոր են, բայց անոր սէրը, անհուն՝ անոնք կը մարին՝ բայց անոր գորովը անշէջ է :

Կինը հրեշտակներուն հետ բան մը ունի հասարակաց... Ըբեալն ու թշուառն է մանաւանդ իր սիրոյն առարկան :

Ահա թէ ի՞նչ էր կինը անցեալին մէջ՝ երբ այնքան անձուկ էր իր ասպարէզը. և ի՞նչ պիտի ըլլայ արդեօք ասպագային, երբ իր պարփակեալ թևերն արձակուին և նախապաշարմանց յուճէն իսպա՛ռ աղատ թողուի :

ՎԻՕԼԱ

Վէսէլօ թատերախումբը յառաջիկայ Հինգշաբթի գիշեր պիտի ներկայացնէ «Կառապանը» անուն ընտանեկան բարոյալից թատերախաղը. ինչպէս նաև խիստ ծիծաղաշարժ զաւեշտ մը. Նոր եկող Իտալական երգեցիկ խումբին կողմէ ալ երգեր և պարեր :

ՅԵՒԵՊԻՐ

Աժանս Բոժոժիկ եւ Ընկ.

ՆիւՇնորք

Շահրիմանի խրոպաւառաւիական թրուցիկը հոս ալ քահարաններու արժանացաւ. Կըսուի թէ այդ աղտոտը մաքրելու համար արտասահմանի մէկ քանի թերթերու հետ զաղտնի բանակցութիւններ կըլլան :

Բոժ. — Կըլլող չի կայ, Պրոպատիկէ աւագանն անգամ չի կրնար զայն մաքրել. ո՛ր մնաց հրապարակային պոռոտախօսութիւնները :

Բարիզ

Կուան դափէ շանթանի նրբանցքներուն մէջ կը զրուցուի թէ Անահիտի խմբագրին խելքը

հիմա տուն եկեր է : (Աղօթելու է որ նորէն դուրս չելլէ) :

Պուրբէշ — Կուլա

Տըրահուչակը դատ պիտի բանայ եղեր. բոշղոքագիրը ստորագրողներուն դէմ որովհետեւ իր պաշտօնէն հեռացուելէն ի վեր է, գրեթէ մահժեղած է :

Տասը Սեղան

Այս անգամ փաշափիշտիականները իրենց խաղանէն հոտած խմոր մը հանած են, սակայն ոչ ոք կարեւորութիւն չտալով, կարծեմ վերջի վերջոյ աղբանոցը պիտի նետուի :

Պրակատիւ

Փաշափիշտիականներէն յետոյ, երեան եւլած են, կարգ մը խլլոտ ճորճորպարպարեաններ :

Քամչաթքա

Հայ հրապարակագիր մը նորութիւն մը հեղինակեց. իր թերթին մէջ գրած «Տեղեակ ոմն» կեղծ անուամբ յօդուածովը ինքզինքը գովաբանելու ելաւ՝ «Թերթիս յարգելի խմբագիրը և այլն» ամականներով փետրադարձուելով, որ ամենուն խնդուք պատճառեց :

ՄէնՍԷ

Թոնքին

Ինքզինքը բարոյականի շերտ նախանձախնդիր հուշակոչ երեք զաւաճաց հայր մը անցեալ գիշեր իւր բենին թէն առած թատրոնէն վերագառնալու ատեն՝ փողոցին մէջ՝ կարծելով թէ մէկը չի տեսներ, իր շրթունքները անորականջներուն մօտեցուց :

Քամչաթքա

Ընտանիք կազմած պարոնի մը այցաքարտերովը լեցուն թղթապանակը գտնուեցաւ... շանթէօզի մը տանը մէջ :

ԱՅԻՆԵԻ ԼԵԹԱՅԻՔ

ՊԻՆ, ՊԻՐ ԱՏԷՏ

(ՄԻԻՆՏԷՐԻՃԱԹԸ)

Կիւլաիւրիւճիւ ֆորուլար վէ Հիբեայէլէր. Մալիւմաթը ֆէննիյէ. Լուղաթը Լէթայիֆ. ֆէննի Էյլէնճէլէր վէ Բէսիմլի Պիլմէճէլէր :

160 սահիֆէտէն իպարէթ օլուպ, բէյտէրբէյ նէշր օլունան մէղքիւր քիթապըն պիրինճի ճիւտի խիթամ պուլուպ, իտարէխանէմիլտէ ստթըլմագտա աւր ֆիյ 2 ֆրնք :

ԱՄՓԻՍՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՉԻՆՈՒ ՄԷՋ

(Շարունակութիւն)

Բ.

Թափօրին գլուխը կը գտնուի ամուսնութեան միջնորդը կամ խաղաղութիւն, ինչպէս կ'ըսեն ձիու վրայ հեծած. յետոյ կուգայ փեսան, շրջապատուած մէկ քանի աղգականներով, որոնց ետեւէն ծառաները՝ որոնք շրջեցուած թուղթեր կը տանին, ուր նշանակուած են ընտանիքին ամբողջ անդամոց անունները և անոնց ուղղուած գովասանանքներ, անոնցմէ ետքը կուգան թմրկահարները որոնք անընդհատ թմրուկ կը դարնեն կախարդները ու մենէ աղէկները վախցնելու համար. երկու կողով անմեռուկներով լեցուն, որոնք երկարակեցութեան խորհրդանշան են. ափսէ մը, որուն մէջ կան գոհարէղէներ ու ամուսնական պատկը, որ թանկագին քարերով դարդարուած է. քքանչի զահաւորակ մը, ամբողջովին կարմիր մետաքսով ծածկուած, որուն մէջ պիտի բազմի հարող փեսին տունը գտցած ատեն, ի վերջոյ կուգան ուրիշ կառքեր ալ որոնց մէջ նստած են փեսին աղգականները ու բարեկամները:

Այսպիսի մեծահանգէս թափօր մը անտարակոյս ունեւորներուն յատուկ է. թափօրը փողոցները կը շրջագայի, կարելի եղածին չափ ազմուկ հանելով, որպէս զի ժողովրդեան ուշադրութիւնը գրաւէ: Իրաւունք ունի ազատ անցք ունենալու ճամբուն վրայ: Մանտարիներն անգամ պարտին մէկգի քաջութիւն մինչեւ որ թափօրը անցնի, ինչ որ քառորդ մը կը տեւէ երբեմն: Երբ թափօրը հարօին բնակարանին բակը հասնի, ամբողջ խումբը ներս կը մտնէ արձակ հախարձակ, բաց ի կարմիր գահաւորակէն որ այն ատեն միայն ներս կ'ընդունուի երբ մեծկակ պարզեւ մը կը տրուի: Ծամբաբազմութեան յոգնութենէն հանգչելու համար կը ծխեն, թէյ կը խմեն, մինչ միջնորդը ազկան կ'իմացնէ թէ երեւալու ատենը եկած է: Միջնորդը երեք անգամ պողալու իրաւունք ունի: Ի վերջոյ կը ծանուցանեն թէ աղջիկ կը հաւանած է: Այն ատեն, ամեն մարդ, մանաւանդ կիները և նորատի աղջիկները հարօին

քով կը փութան՝ իր փայլուն դարդերուն մէջ տեսնելու զինքը: Իր տյծի փոքրիկ ոտքերը սեղմուած են երկնեւրանգ ասեղնազործուած գեղեցիկ կօշիկներու մէջ: Կանաչ սաթէնէ անդրաւարտիք մը կը գրկէ մարմինը. Լայն թեղանիքներով վիսայ մը յիշատակ հազած է, որ ամբողջովին գրեթէ ասեղնազործուած է և գոյնզգոյն, որուն մէջ ամենէն աւելի տիրապետող գոյնը կարմիրն է: Մազերը որ աղջիկներութեան ամեն հիւսկէններու բաժնուած կռնակին նաեւ ձգուած էին, հիմա կ'ամփոփուին գլխուն վրայ՝ կարմիր երկղով մը, ու սկիւի կամ արծաթէ գնդասեղով մը՝ մազերը կը բռնուին գլխուն ետեւ: Ամուսնական քօղքը ճակատը կը ծածկէ, իսկ ուրիշ քօղք մը կարմիր սաթէնէ շինուած—կարմիր, միշտ կարմիր—կը ծածկէ բուստի գոյն ներկուած շրթերը: Եւ մինչև աչքերը չպարուած դէմքը:

Այն ատեն զուարճալի կատակերգութիւն մը տեղի կ'ունենայ: Ներկայ եղող կիները կը շրջապատեն հարսը և բարձր ձայնով ողբ ու կոծեր կ'ընեն, որոնց հարսը կը պատասխանէ սրտառուչ ողջոյններով: Ուղղուած հօրենական տան, պարտէզին ծառերուն ու ծաղիկներուն և ինչ որ իր մանկութեան սիրելի եղած է. Հարսնեւորները կը ջանան մխիթարել զայն. ասոր վրայ հարսը իր աղակալից ողբերը ալ աւելի կը բազմապատկէ և իր ճերմակ թաշկինակը շրջագործէն կը շարժէ քօղին տակ, արտասուածքով աչքերը սրբելու համար: Ի վերջոյ հարսը ալ ուժապառ կը նուալի, որովհետեւ կը քաղեն հարսանեկան պատկը անոր գլուխը դնելու համար: Յետոյ կիսամեռ վիճակի մէջ գտնուողը կը տանին ու թափօրը ճամբայ կ'իջնայ՝ դէպի մանչուս ատենը, ուր պիտի կատարուի հարսնիքը: Փեսային ընդ առաջ կ'ելլէ հարսանեկան թափօրին: Փեսային ծնողքը ամէն ջանք կ'ընեն իրենց հարսը յաւ ընդունելու համար: Տան արտաքին մասը շքեղօրէն զարդարուած է լապտերներով, գրօշներով, սրահակներով, ծաղկեպսակներով: Ներքին մասը պճնուած է մարմանգի, ծաղիկներու և վերտառութեանց գալարուն զարգաբանքներով:

(Շար)

Եթէ կ'ուզէք ձեր ոսկեղէն, արծաթեղէն և պողպատեայ ամեն տեսակ իրեղէնները ոսկեզօծել կամ արծաթապատել, գիմեցէք Մուսալիւ համալսարանի փողոց 9, Ռուբէն Գալանճեանի նոր բացած խանութը, Գին դիւլաւատչելի:

ԲԱՌԵՐՈՒ ՆՈՐ ՍԱՀՄԱՆՆԵՐ

Գովեստ. — Քաղաքակիրթ ստախոսութիւն:

Բարեկամութիւն. — Կուզէի գիտնալ թէ ո՞ր անձաբակ մատենագիրը այսպէս մեղանշեր է ըստուգաբանութեան դէմ՝ այս բառը շինած ատեն:

Դրամոծիտ. — Ամուսնական երջանկութեան ցնծուն դամբանականը:

Պաշտում. — Ոտանաւոր քերթուած՝ զոր ամուսնութիւնը արձակի կը վերածէ:

Արցունք. — Կակժոտ տալը զուարթ անձրեւին:

Վիշտ. — Բառգիրքը մէկ հատ մը ունի, Սիրտը՝ տեսակը:

Սէր. — Քրոնիք հիւանդութիւն, ոմանց քով թոքախտէն աւելի մահացու, շատերուն քով հարբութիւն չափ անվնաս:

Վաղը. — Աստու չունի՝ եթէ գործածողը ծոյլըն է կամ պարտատէրը:

Պատրանք. — Եթէ շատ հանգիպած ես իրեն, օր մը առանց «Բ»ի պիտի տեսնես զինքը:

Այտ. — Մըրկող հանգրուանը շրթունքին:

Համբոյր. — Կանխավճարը վայելքին, քեզայիջ ոսկով:

Մ.

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՐՔԵՐ

ԷՂՈՒԿ ՏՈՒՏՈՒԿՆ ՏԱՆՏԻ ՆՈՒԹԻԻՆԸ

Անցեալ երկուշաբթի առաւօտ Եւնի Մահալէի թաղի հայ տուներէն մէկուն դրանը առջև հետեւեալ տեսարանը կանցներ.

Նոյն տանը բնակիչներէն օրիորդ մը որ մօտակայ աղբիւրէն սափեցով ջուր կը բերէր, դռնէն ներս մտած արեւը ձայնեց իւր մօրը.

— Քա մայրիկ, առնալուտ զավզավածին եկեր կայներ է:

Մայրը. — (Ներսէն) Արնալուտ զավզավածին ո՞վ կըլլայ կոր քա:

— Սա ուր է՝ ամիս մը առաջ խըշըխ սօխ առեր էինք տէ՛ թէլթիք տասը զոռը Ֆաւցած էր, հիմա եկեր անիկա կուզէ:

— Մարըն անօր հոս չէ, ըսէ:

— Ծօ՛, տուտում պո՛ւ կիւն պիւրտա Ծօգ:

— Մօռէ չըղը պանա տուտույու:

— Քա քեզ կուզէ կոր մարիկ:

— Ի՞նչ պէճէրիկսիղ զաւակ ես քա, հոս չէ ըսէ տէ ճամբէ:

— Ծօ պուրտա տէյիլ տէեօրում սանա:

— Մօռէ նա՛հ տուտու իչէտտէն լաֆ էտէն, ա մօռէ նի՛շին եալան սէօյլէն:

— Քա տուտու, չի հաւտար կոր. հէմ՝ աշկը չանախ չանախ վրաս կը բանայ կոր:

— Վույ ծակ ծակ ծակժկիս մարդ, կայնէ նայիմ քա, սապահըն հայըր, նէ՛ տիր օ:

— Ա՛ մօռէ տուտու, սօղան փարասը դալտը օն կօռօշ:

— Պէօյիւն փարամ եօգ:

— Մօռէ տուտու, առնալուտնա դաթուրէզթ փարա էթմէզ՝ չօղ լադուտը կիօթիւրմէզ. վէն պէնիմ օն կօռօշ:

— Հէ ամա՛ պէօյիւն ուֆագլըզ եօգ. հէմ եօրթուտուզ վար տըր, պիր իքի կիւնտէն կէլ:

— Մօռէ եասու եասու բըռըռ եասու, պույուն պիրիսի, եարըն իքիսի օ պիր կիւն հէփիսի, ա մօռէ պո՛ւ եօրթուլառ պիթմէտի:

— Վոյ կըլխուզ, տուն կիրակի չունիս. ա՛ս ալ շատ տեսար:

— Մօռէ տուտու չօգ լադըտը իսթէմէզ, բառալառի վէռմէլի. չօգ փառա տէյիլ:

— Հէ, էօյլէ տիր ամա շիմտի օրթալըզ քէսատ տըր. հալխուն չէնեէն չէնեէին է տնցեր:

— Մօռէ պիզիմ մէմլէքէթտէ չօգ ուճուզլուզ. ա՛ մօռէ պօլլուզ, հաչան կիտէրսին պիր դասապա, ալըրսըն պիր պո՛ւնպար, ա մօռէ եէ՛ մօռէ եէ՛, պիթմէզ:

— Վայ կըլխուզ, պիզ պունլար եէյէմէզիք:

— Ա տուտու նի՛շին եէմէզսինիզ. վար պէնիմ պիռ տաերմ, պալուզ բաղալտա բաչաճի. պուճպար հաշլար, եաքար սալթար, ֆըթ ֆըթ ֆըթ ֆիթ ֆիթ ֆիթ բաչաճի սինան բաչա տէրլէր:

— Հայ մօռէ մօռէ մօռարմիշ ըլլաս մարդ, թավաս կրակին վրայ մնաց:

— Քա տուտու, ինչո՛ւ համար խազի պէս ֆըթ ֆըթ կընէ կոր:

— Ի՞նչ անտիսիին մէնծին համար, եո կիտեմ հէմ հայտէ ներս կորսըէ, սանկ տիմացը ծիկ ծիկ մի խնդար:

— Մօռէ տուտու, օ առամ չօգ պէօյիւք բաչաճը տըր, պէշ առապա չտնագ ինէ չէօմլէք ինէ շըռտէն ինէ տալաք ինէ, քէչի էֆէնտըմ, սապուն էֆէնտըմ, սապունուզ էֆէնտըմ, մասաթ էֆէնտըմ պուչագ էֆէնտըմ:

— Կածակի կաս հէմէն մարդ, կիտես քի բաչաճութիւն պիտի ընեմ տէ կայներ ինծի մասաթ պուչախ թարիֆ կուտայ. այ օղուլ, ագչում իչին նէմէք հազրալաճարմ, պէնի լաֆա

թուլթմա. իբր կիւնտէն սօղրա կէլ տէ բարանը վերէյիմ:

—Մօռէ տուտու, նիշին եէմէք բիշիրիրսին, նիշին եօռուլուրսըն. ա մօռէ զէյթի զէյթի զըմպըլ զէյթի, տօլտուր գուզուլու վէր ֆուռունա՝ եէ՛ պունպարը կէ՛օր լէզէթի:

—Աշկդ էլլայ, մարդ, պունպարը առեր կայնէր է. պանա պագ պէօյիւն բարա վէրմէյէճէիմ սանա:

—Մօռէ օլմազ. պու կիւն պու կիւն իստէռիմ՝ ահա պուռտա օթուռտում:

—Քա մարիկ, ասանկ օրով ամօթ է ասիկա, տեսնողը ի՛նչ չըսեր. ճարելու տարու է:

—Վո՛ւրկէց ճարեմ քա՛:

—Տօլապիդ առջին օ ֆրանքնոց մը կայ, իշթէ մէջէն կուտանք:

—Հապա՛, անման, ես ան բարան հիշ կը խոռեմ. չէմ չիյէ պտոր առնեմ:

—Մարիկ թող գալ շաբթու ըլլայ ադ չէմ չիյէն:

—Իրա՛ կըսես կոր. զէհէր աս շաբթու ալ տունը պիտի նստիմ:

—Դուն տուր սա մարդուն բարան՝ ես իրիկուան հօրմէս կառնեմ:

—Էյ հիշ կուտայ, իրեք հեղ է քի՛ստի բարա ըսելով կառնեմ կը խարճեմ կոր:

—Էյ ինչո՛ւ կը խարճես կոր մայրիկ:

—Ի՛նչ ընեմ, սէյիլի սէրեանի չի տուի եա՛, առած եաքմա մաղերուս համար տուի:

—Մօռէ տուտու՛ բառալառի՛:

—Տեսա՛ր մարիկ, նա՛սըլ կը պօռայ կոր:

—Ա մօռէ եարըն պէն սիլաեա կիտէճէիմ:

—Վա՛յ կլխունուդ, ամենդ ալ սիլա պիտի երթանք կըսէք՝ էրկու շաբաթ խայիպ կըլլաք կէնէ մէյտան կելլաք:

—Հատէ մօռէ բառա՛:

—Պաղըրմա հէյ արուն պերան մարդ:

—Նա՛սըլ պաղըրմայրմ, վէր պէնիմ շու օն կոօշ, եօգսա պիր եհրէ կիթմէիմ:

—Աշկդ խորովի մարդ, ծօ բարամ եօգ տուր ամա՛ իստէրսէն սանա պիր հէլվահանէ թէնճիրէսի վէրէյիմ տէ՛ իշինէ կիթ:

—Մօռէ վէ՛ր, վէ՛ր, քէփչէ տէ վէր, մասաթ տա վէր, պըչագ տա վէր:

—Մարիկ, ի՛նչ կընես, թէնճիրէն մեղք է:

—Էյ ի՛նչ ընեմ, իզմէ աղէկ չէ եա՛, ներսի

բարան աշխարհք մէկդի կալու ըլլա՛ չեմ խոռեր. վաղը չէմ չիյէս իլլէ պիտի առնեմ. ես ան բարան չեմ կրնար մէյ մնալ տեղը դնել, ամա թէնճիրէյով էօտէյիշ ըլլանք նէ՛ զարար չունի. հարըդ վո՛ւրկէ պիտի իմանայ թէնճիրէն ծախել. նիս. չարն ալ կը խափանի:

Այս ըսելէ ետքը Էղսիկ տուտուն 25 շրուշի թէնճիրէն 10 շրուշի պարաքին փոխարէն մարդուն ձեռքը յանձնելով կը ճամբէ:

—Բոժ. Տանտկնութիւնն ալ ասանկ ըլլալու է:

Հ Է Ք Ե Ա Թ

ԿՈՒՌ ՊԵՏԸ

Մէկը կար մէկը չ'կար

Ապուշ, կուռ պետ էշերու

Կար մարդուկ մը թրքալար:

Օրին մէկ խելքը փշեց

Երթամ հոն՝ աշխարհ հեռու

Ըսաւ, մարդ ըլլամ մեծ:

Եւ գնեց մելան, գրիշ

Կաղամար, թուլթ հարկաւոր:

Գրեց, ա ղռաց մի քիշ:

Իսկ էշեր ճանչցան իր ձայն,

Մափեցին համբաւաւոր

Ըսին, է մեր իշապան:

Թեին տակ սաղմոսարան

Իրաւասուտն շալկած կռնակ

Քիշ մ'ալ կըլլած կուկուկ գուրան:

Երբեմնի իշապան մեր

Սկսեց, յայտնեց փափագ

Ճառելու, «աղաքիք»... «էշ էր»:

Հայրենիք, աղգութիւն,

Ընտանիք, վարդապետ,

Նախատինք, պատիւ... թիւն, թիւն,

Իրարու խառնեց, զոռաց:

Կըսեն թէ ապուշ կուռ պետ

Մինչ հիմայ ճառէ բռնկած:

Քահնաի

ԹԵՐԹՈՆ «ՀԱՅԵԼԻ» (38)

ՌԻՆԵ ՏՐ ԲՕՆ ԺԷ

ՄԱՐԳԱՐԻՏՆԵՐՈՒ ԳԵՏԸ

(ԿԱՐՄԻՐ-ՄԱՍՈՒԿԸ)



Այն ատեն, յանկարծ յարգելի նստադահլիճի տանիքին՝ սոսկումի աղաղակ մը արձկնեց եւ ոստում մը ըրաւ դէպ ի հետեւ.

Ծովահենը աչքերը բացած էր, խորունկ հառաչ մը դուրս ելած էր կուրծքէն: Ապակեփայլ աչքերը շուրջը փտնուողներէն մէկէն միւսին կերթային: Երբ կանգ առին Մէնկի վրայ, զոր առջուշտ չէր ծանշնար, սա չկրցաւ ինքզինքը զսպել և շարժում մը ըրաւ փախչելու համար.

— Խեղճ էք ի՞նչ էք, ըսաւ Բերբինս ճամբան կեցնելով զայն.

— Կ'ողջունեալ, կը արմըշէր տարաբախտ մանտաւքէնը որ կը գոլգոլար. կ'ողջունեալ.

— Կը յուսամ. Կ'երեւակայէիք որ թաղել տալու համար էր որ հարիւր անգլ. ոսկիի գնեցի զայն.

Մէնկ ալ բան մը չհասկնալով, թողուց որ բազմոցին բով տանին զինքը, ուր Բէյ-Հօ մեղմիւ կը վերկենցաղէր.

Ջօրաւոր կազդուրիչէ մը քանի մը կաթիլ խմցնելէ ետք, Բլիթթըն անոր վերքին վրայ սարուած մըն էր դրած որ զերծ կը պահէր զայն օդէ եւ հպումէ: Շնչափողտութեան գործողութիւնը զոր կատարած էր դատապարտեալին վրայ, կատարելապէս յաջողած էր: Բուժումը հազիւ երկու երկու երեք օրուան խնդիր էր. բայց բաջ գատաւորը, որ ասանկ բանի վրայ գօղափար իսկ չունէր, կախարդութիւն և վհուկութիւն կը կարծէր հղածը.

— Ուրեմն չէ՞ մեռած, յանգգնեցաւ հարցնել վերջապէս.

— Ի՞նչպէս ես, հարցուց բժիշկը ծովահենին, փոխանակ իր խօսակցին պատասխանելու.

— Աղէկ, արմաւոյ ուրուականը տկար բայց յոյժ որոշ ձայնով.

Խեղճ նախագահը աչքերը երկինք վերցուց, յետոյ խօսք մը ըսելու անկարող, երկու ձեռքերովը բռնեց գլուխը՝ կարծես թող չտալու համար որ խելքը թռի.

— Կը տեսնես որ խոստումնիս բռնեցինք, ըսաւ

Բերբինս ալ Բէյ-Հօին: Հիմակ դուն ալ բուկդ պիտի բռնես. կախուած ըլլալէդ յետոյ խօսած պիտի ըլլաս.

— Այո, ըսաւ աւագակը, շուրթերուն վրայ տարօրինակ ժպիտ մը երեցաւ.

— Քառասունըութը ժամէն երէկուան չափ առողջ պիտի ըլլաս. այն ատեն իբրեւ առաջնորդ պիտի ծառայես մեզի՝ Լատրոն կղզիներն երթալու.

— Երդում բրի.

— Եւ պիտի ըսես թէ Զուրի-Եղեգին պետը ո՞վ եղաւ քու տեղդ.

— Կարմիր-Մամուկը.

Այս անունն արտասանած միջոցին աւագակն այն աստիճան ոգևորուած էր որ Բլիթթըն ստիպուեցաւ ձեռքը անոր ուսին վրայ դնել՝ թող չտալու համար որ բուռն շարժում մը ընէ.

— Կարմիր-Մամուկը, Ի՞նչ կ'ըսէ, հարցուց Մէնկ աշխուժիւ մօտենալով.

— Այո, Կարմիր-Մամուկը, Զուն, Ֆուն-Սիի նախկին մտավաճառը, կրկնեց Բէյ-Հօ, որ աչքերը գոցեց այս ձիգէն յոգնած.

— Սեցիք, Բերբինս, դուք մանտարէնը, ապշուածեմ եւ ուրախութեան անցնելով յանկարծ, ինչպէս քիչ մը առաջ սրտկոմէն ապշութեան անցեր էր. Լսեցիք, բարեգիտ, սիրելի բարեկամ.

— Անշուշտ, պատասխանեց նաւապետը.

— Գիտեք թէ ուր է մարդասպանը կամ մանաւանդ Լէնկի սպանիչը: Պետն է այն թշուառականներուն որք ինչպէս ձեր, իմ ալ թշնամիներս են.

— Շատ ձիշդ է: Կը տեսնէք որ Ռուսիի հետ մեր սակարկութիւնը շատ գէշ գործ մը չէր: Ա՛լ խնդիրը ձեր մարդը բռնելուն վրայ է.

— Պուտտան վկայ, շիտակ է, հիմա բռնելու է զայն.

Այս դիտողութիւն սառուցիկ սրտկոմի պէս ինկած էր իր զուարթ բորբոքման վրայ.

— Այդ արդիւնքը ձեռք բերելու համար է, որ ինծի չափ կը շահագորդուէ ձեռքի...:

— Կը հաւատամ, ձեզ չափ, եւ նոյն իսկ աւելի.

— ...Որ պէտք է ձեր բոլոր ազդեցութիւնն ի գործ դնէք: Տրեթորն իր մարդուն հետ ձգենք եւ ճաշասրահ անցնինք: Հիմա պիտի ըսեմ ձեզ թէ ի՞նչ ընելու էք.

— Գէթ երկրորդ անգամ չը՞ պիտի մեռնի, հարցուց խոշոր գատաւորը՝ սիրալիր հոգածութեամբ իր ակնարկ մը նետելով Բէյ-Հօի վրան:

— Ո՛չ, մի՛ վախճար .

Եւ, բռնելով իւր արժանաւոր բարեկամին բացուկը բերքինս բովի խուցը մտաւ .

— Կը տեսնէք թէ ուր կը գտնուինք, ըսաւ, բերել տալէ ետք շէրրին զոր պատուարն ուղած էր իր կրած յուզումներէն կազդուրուելու համար, այսօր գիտէք ձեր մարդասպանին անունն ու տեղը : Խնդիրը միայն կը մնայ արտանութիւն անել քոնկ իշխանէն Լատրոնի մէջ զայն բռնելու համար : Ոչ իր ժօնքաներուն ոչ իր զինուորներուն պէտք ունինք : Թող թող տայ որ մենք անձաժք կատարենք այս արշաւանքը, և յաջողութեան մասին պատասխանատու կ'ըլլամ ձեզ : Այսպէս, մէկ քարով երկու թռչուն պիտի զարնենք : Չեզ պիտի յանձնենք մարդասպանը և պիտի մաքրենք այն որջը որուն վրայ չի համարձակիր յարձակիլ ձեր կառավարութիւնը : Օ՛հ դուք կրնաք արշաւանքին մասնակցիլ .

— Այո, անշուշտ, թոթովեց Մէնկ, որ չէր համարձակեր մերժել, չզիտնալով թէ իր հիւրընկալը կատակ կ'ընէր թէ լրջօրէն կը խօսէր .

— Ուստի, վաղը առտու Լուսնալուն կը մեկնիք մակընթացութեան հետ : Մինչեւ վամ—բօս շոգեկանին կապել տուէք մակընթացի : Այսպէսով կանուխ պիտի հասնիք քանդոն և վաղն իսկ պիտի տեսնէք փոխարբան .

— Հասկցայ : Ժամանակ չիկայ կորսնցնելու .

— Ուրիմ կացէք հանգստացէք, ես վերջին այցելութիւն մը պիտի տամ ձեր յարուցեալին . բարի ճամբորդութիւն, վասն զի մեկնելէդ առաջ չպիտի տեսնեմ ձեզ . երկու երեք օրէն գործակալատուն պիտի ըլլամ, մինչեւ որ մեր ապագայ առաջնորդը բոլորովին ազիկնայ .

— Օ՛հ, գէթ աղէկ խնամեցէք այդ սիրելի բէյ—Հօն . Իրաւ տարօրինակ բան է աս : Կախում մարդ մը որ կախում չէ : Այն սատանայ մասփաճաւը այն թշուառական մարդասպանը երբ իր անունը իմանամ, պահուած տեղը անյայտ կ'ըլլայ, և երբ իմանամ թէ ուր կը գտնուի անմեղանկ տեղ մը կ'ըլլայ անպատճառ . Ա՛հ, նորէն շատ գէշ գիշեր մը պիտի անցունեմ .

Եւ, սեղմելէ յետոյ նաւապիտին ձեռքերը, խեղճ նախագարը հառաչելով ուղուեցաւ դէպ այն սենեակը որ իրեն համար պատրաստուած էր ամարանոցին մէջ .

(Շուր .)

“ԳԵՂՈՒՆԻ”

“ԲԱԶՄԱՎԷՊԻ”-ի խմբագրութեան այս նոր թերթի անդրանիկ պրակը հրատարակուած է հետեւեալ պարունակութեամբ .

Յօդուածներ

Երեմ. Հ. Ս. Օգնենք ու գործենք (խմբագրական)

Ղաղիկեան. Հ. Ա. — “Այստեղի հրապարակչ” ողբերգութիւնը :

Երեմ. Հ. Ս. — Գեղունի (նկարագիր տիեզերահրդապետ Երգապետաց և Վենետիկոյ ներքայ գեղարուեստի ցուցահանդէսին, և այլն) :

Թրքահայ Դէմքեր (Պ. Օտեան. — Ս. Մայրապետ Գալֆայեան . — Տօթ. Փէշտիմալճեան) :

Էփրիկեան Հ. Ս. — Դավրէժ տեղիկազրական նըկարագիր) :

Պատկերներ

1. Իտալ . երաժշտական փառքերու Ռոսսինիի, Պելլի-նիի, Տոնիճէթիին և Վերտի խմբանկար :

2. Ապաստան մեղաւորաց (Վենետիկոյ ցուցահանդէսին սրտաշարժ պատկեր) :

3. Դարձ ձկնորսութենէ (զլուսի գործոց տանիմարգացի Արքեր Միքայէլ Նկարչի . զարդ Վենետիկեան ցուցահանդէսին) :

4. Այս տարուան մէջ վախճանեալ երկու հռչակաւոր իտալ .

5. Նկարչներու զլուսի գործոցներուն գեղեցիկ պատկերք

6. Պ. Օտեան :

7. Ս. Մայրապետ Գալֆայեան :

8. Տ. Փէշտիմալճեան :

9. Դավրէժի Թամարեան մանկապարտէզի աշակերտաց խմբանկար :

10. Դավրէժի Բերդաթաղի տեսարանը :

11. Դավրէժ քաղաքի ընդհանուր տեսարան :

12. Դավրէժի Հայ Օրիորդաց Թամարեան ուսումնարանը :

Կողբը

Կողբը աւտաբստպէս գարգարուած է զրբերու ծանուցումներով : Կ'ընդունուին յայտարարութիւններ . իւրաքանչիւր տող կ'արժէ 50 օսնդիմ :

Կողբը ներքին երկու երեսներուն վրայ՝ Կը պարունակէ ժամանակակից ազգային նոր և կարեւոր տեղեկութիւններ, բաղուած հայ լրագիրներէ : Բայց աստի բաղմաթիւ նոր գիտելու վրայ տեղեկութիւններ : Ամէն ի միտին հրատարակուած են մանրատու ութը երկայն սիւնակներու մէջ :

“Գեղունի” կը հրատարակուի երկու ամիսը մի անգամ . Տարեկան բաժնեկիւնն է 3 Փրանք : 1 ըմ . 50 կոպէկ :

Թերթէս գոյացած մաքուր հասոյթին կէսը առանց կրօնքի խորութեան, կը յատկացնենք Ազգիս Որդիկ-Անրուն :

Ապառիկ բաժանորդարութիւն բացարձակապէս չընդունուիր . Գինը կանխիկ է :

Բաժնեկիւն, նամակ, և այլն, Ազգային հետեւեալ հասցէին յղելու է

“ԲԱԶՄԱՎԷՊԻ”

Սէն Լազար

Վէնիզ (Իթալի)

Ռուսաստանի և Ամերիկայի ազգայինք դիւրաւ ըստանալու համար կարող են զիմիլ հետեւեալ մեր դործակալաց

Ռուսաստան . — Պ. Գալուստ Գալուստեան Թիֆլիզ

Ամերիկա . — “Հայրենիքի” խմբագրութեան

Պոսթոն Մաս

Печатница “Взаимность” — Варна